

ՀՆՁՍԿ

ԲԱՐԵՆՑՐՈՐԳՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՇԵՐԻԺ.

(Յօդուած երկրորդ.)

Հայտնի է, որ դեռ Բերլինի կօնգրէսի ժամանակ Ներսէս պատրիարքը ներկայացրեց վեց մեծ տէրութիւններին Հայաստանում անելիք բարենորոգումների մի նախագիծ: Մի նախագիծ եւս կազմեց աւելի ուշ Նուբար փաշան, և այդ երկու նախագիծերն իրանց ընդհանուր սկզբունքներով միանման են: Թողնենք մի կողմ այն համադամները, որ Ներսէս պատրիարքի նախագիծը, որպէս և Նուբար փաշայի, բողոքովն մուսացման են յանձնել միշտ քառանկարի պայմաններ, որոնք անհրաժեշտ են մէկ ինքնավար ազգի ներքին կառավարման համար. թողնենք մի կողմ նաեւ այն, որ այդ նախագիծերն ամեն անսակ իրաւունքներ կենտրոնացնում են իշխանութիւնների վրայ, որոնց յարաբերութիւնները ժողովրդի հետ չեն որոշված, — կայ սակայն մէկ ուրիշ կէտ, որ արդէն անգործնական է: Ներսէս պատրիարքի նախագիծը թէ համայնական խորհուրդներում, թէ գաղափարական կարգերում և թէ վարչական խորհուրդում մտնում է միաժամանակ թէ քրիստոնէական և թէ մահմեական տարրեր, որով կամայականաբար երկու լիզու: Ճիշդ է, որ իր նախագիծում նա պահանջում է հայոց լիզու իրրեւ կառավարական լիզու, բայց իսկապէս, de facto, դա դառնում է անհնարին, քանի որ կայ դուալիզմ (dualisme), այսինքն երկու տարրերի խառն (mixte) գոյութիւն բոլոր վարչական ու գաղափարական գործերում:

Բարենորոգումների Նախագիծը, որ ներկայացվեցաւ սուլթանին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից, վերոյիշած երկու նախագիծերից աւելի կարեւոր ու հեղինակաւոր փորձն է գործնական կերպով լուծելու հայկական դժուարութիւնները: Նրանց մի քանի կէտերը կարեւոր են ինքնրաստիքեան: Հարկեր ժողովելը՝ որ պէտք է կատարվէ համայնքից ընտրված մուխտարների ձեռքով առանց ոստիկանների ու թիւրք պաշտօնականների միջամտութեան, ապահովութիւն ձեռքապաշտութիւնից ու բանտարկութիւնից առանց գաղափարական կարգադրութեան, մարմնային տանջանքների վերացում, կրօնական հալածանքի վերացում, — այդ կէտերը կարեւոր են, եթէ միայն գործնականութիւն ստանին: Մանաւանդ քաղաքական յանցանքների ընդհանուր արձակումը, ամսիստիան (amistie), նաեւ մի քանի քաղաքական դատերի վերադարձութեան պահանջն, անտարակոյս, ամենքի կատարեալ հաւանութիւնը կուենենան:

Բայց այդ նշանակված կէտերից, որոնց գործադրութեան համար թէեւ, ինչպէս ասացինք, դեռ չենք տեսնում մի գարանտիա, մի երաշխաւորութիւն, Նախագիծի մնացած կէտերը քննադատելի են: Բայց ենթադրենք մի բոլոր, որ այդ Նախագիծն ընդհանուր առմամբ լու է, ենթադրենք, որ սուլթանի կառավարութիւնը ստիպված ընդունեց այդ Նախագիծն իր բոլոր կէտերով. ենթադրենք նոյնպէս, որ մէկ ամսից յետոյ հայերը պէտք է կառավարվեն այդ Նախագիծում առաջադրված օրէնքներով. — բայց ո՞ր է այն գարանտիան, որ այդ օրէնքները չը պիտի մնան մեռած տառ: Նախագիծում ասված է, թէ քրիստոնէայ կառավարիչներ պէտք է նշանակվեն այն գաւառներում, որտեղ քրիստոնէականն են մեծամասնութիւն կազմում, ունենալով իրանց հետ մահմեական փոխ-կառավարիչներ՝ մահմետական բնակիչների շահերը պաշտպանելու համար և vice versa, այն գաւառներում, որտեղ քրիստոնէականը փոքրամասնութիւնն են: Գա նոյն Ներսէս պատրիարքի դուալիզմն է՝ հմուտ կերպով ձեւափոխված արաբոստ, մինչդեռ էութեամբ մնացած նոյնը: Բողոքովին չէ թոյլատրվում, որ և է մասնակցութիւն իր գործերի կարգադրութեան մէջ և ոչ էլ վերահսկելու պաշտօնականներին մի խօսք, մէկ ակնարկ անգամ չը կայ մասուլի, խօսքի, ժողովների, ընկերութիւնների, ընտրութեան աղատութեան մասին: Մինչդեռ, ընդհակառակը, սուլթանի համար վերապահվում է մէկ իշխանական ամենաարձր իրաւունք, որ մինչեւ այսօր եղել է այն գլխաւոր պատճառներից մէկը, որ առաջացրել է Հայաստանի ծանր վիճակը: Այսպէս, կառավարիչ երբ և փոխ-կառավարիչները — քրիստոնէայ ու մահմեական — նշանակվում են սուլթանի կողմից: Թիւրքերիւմ՝ ամենավատ պաշտօնականներից շատերը քրիստոնէայ են եղել, որոնք պաշտօնների համար իրանց կրօնքն են փխել: Նրանք չէին կարող աւելի լու լինել, եթէ քրիստոնէայ միայն, և այդպիսիներ իսկապէս եղել են: Նախագիծի հեղինակները, ինչպէս երեւում է, ծանօթ են թիւրք բիւրօկրատական (bureaucratique) սխառմի հետ, որ առաջարկում են սուլթանի ընտրած պաշտօնականներին հաստատել եւրօպական տէրութիւնների կողմից: Բայց հէնց որ եւրօպական հասարակութիւնը դադարէ հետաքրքրվել հայի լի մասին (ինչպէս էլ կը լինի քիւ ժամանակից յետոյ), սուլթանի նշանակած պաշտօնականների հաստատումը պէտտութիւնների կողմից կը դառնայ լոկ ձեւականութիւն և հայերը դարձեալ կը մնան պաշտօնականների, բնահաճոյքին զոհ, ինչպէս են այսօր: Գա, իհարկէ, մի շատ սխալ արդիւնք է այսքան ամիսների եւրօպական ազդեցութիւնից յետոյ: Մի քանի անգլիական լրագիրներ այդ Նախագիծն անուանեցին Ֆարս կամ կա:

տակերգութիւն: Այդ է նաեւ մեր կարծիքը:

Եւրեք տերութիւնների այդ Նախագծում կայ մէկ ուրիշ կէտ, որ անշուշտ չէ խուսափել Հայ ընթերցողի աչքից: Այդ կէտի կարեւորութիւնը մեծ է: Ահլընյայանի է, որ նա արդիւնք է Հայ յեղափոխական շարժումների: Նախագիծը՝ իբրեւ բարենորոգելիք նահանգներ՝ Մեծ Հայաստանին միացնում է փոքր Հայքը, որպէս և Տիգրանակերտի նահանգը, պարզ է, որ ի նկատի առնուած ունենալով այդ վերջին երկու վայրերում ևս տեղի ունեցած մի շարք յեղափոխական շարժումները: Այն արուեստական բաժանումը, որ արված էր Մեծ ու փոքր Հայքի մէջ Բերլինի Գաշնագրութեամբ, այժմ բոլորովին նշանակութեան չէ առնված: Բերլինի Գաշնագրութիւնը (որպէս և Ներսէս պատրիարքի նախագիծը), որ իբրեւ Հայաստան ընդունել էր միայն Մեծ Հայքը և այն էլ ոչ ամբողջութեամբ, այժմ լիովին անուշադիր թողված է այդ կէտը, և հոգի այն ահագին տարածութիւնը, որ կազմում են փոքր Հայքը, Տիգրանակերտի նահանգը, որպէս և խարբերդի այն մնացած մեծ մասը, որ չէր մտնում Բերլինի Գաշնագրութեան մէջ. հիմա միացվում են Մեծ Հայքի բարենորոգումների միեւնոյն պահանջով: Սրանից տարիներ առաջ մեր դէմ առարկութիւններ եղան շատ տեղերից, որոնց թւում և մի քանի հայերէն և օտարալեզու հայ թերթերի կողմից, թէ ինչու էնչակեան Դրագիրը և գործնէութիւնը չենք կենտրոնացնում միմիայն Բերլինի Գաշնագրութեան գծած Մեծ Հայքի վրայ և շարժումներ ենք առաջացնում անխափ կերպով առհասարակ ամբողջ Հայաստանում, որպէս և Տաճկաստանի բոլոր հայաբնակ վայրերում: Մեզ անուանում էին այն ժամանակ տաք գլուխներ, ան գիւշանա գէտ գործողներ, սխալ և վրնասակար ուղղութիւն բռնողներ և նոյնանման շատ ածականներ, որոնք այսօր, ի հարկէ, աւելի յարմարվում են նոյն մեր դէմ առարկողներին: Ե՛հ, ինչ կուզէք, շախարհս պատվում է և նրա հետ միասին, յուսով ենք, պատվել են մեր դէմ այդ առարկողների գլուխները, և այժմ նրանք գտնվում են իրանց տեղերը: Այժմ, միայն յեղափոխական գործունէութեան, միայն յեղափոխական արեան ենք պարտական, որ այսօր Խորպան պաշտօնապէս ընդունում է իբրեւ բարենորոգելիք Հայաստան ամբողջ թիրաբական Մեծ Հայքը և ամբողջ փոքր Հայքը: Նա ընդունում է իբրեւ հայկական դաւառ նաեւ Նիլիկիան, որի մասին խօսք կայ Նախագծում: Այդ խօսքը սակայն շատ անցողակի կերպով է անվում և Նիլիկիայում մտցվելիք բարենորոգումների այն մէկ-երկու կէտը, որ նշանակված են Նախագծում, ոչ միայն աննշան են, այլ և ոչինչ չեն ներկայացնում: Գարմաններ արդեօք եւրոպական դիպլոմատիայի անհաստատութեան վրայ: Թոյլ տանք արդեօք այն ենթադրութիւնը, որ նրան անծանօթ են Նիլիկիայի հայ ժողովրդի թշուառութիւնները: Նրա վարչական բարբարոս դրութիւնը, միևնոյն առարգ ու գաղանային կառավարութիւնը, որի դէմ այնքան գրում ու խօսում են Անգլիայի պատուաւոր լորդերն ու սըրերը և շնորհակալ է յղի են երբ: Քանի որ Խորպայի կողմից պաշտօնապէս ճանաչված և ապրողացված է, որ կան վայրերի բռնութիւն, անիրաւութիւններ ու գաղանային կառավարութիւններ Թիւրքիայում՝ հայ ժողովրդի վերաբերութեամբ, այդ պարագայում ինչ է նշանակում մոռացման յանձնել մէկ ահագին դաւառ,

որ նոյնպէս հայկական է: Ազատութեան փափագը Նիլիկիայում գուցէ աւելի տարածված է, քան միւս հայկական գաւառներում, և նրա յեղափոխական ձգտումներն էլ նոյնպէս զօրաւոր են: Բոլորովին զարմանալի չը պիտի լինի, եթէ եւրոպական դիպլոմատիայի այդ սխալ ընթացքը ծառայէ իբրեւ նշան Նիլիկիայի ապստամբութեան: Ճիշդ է, որ մի դաւառ կարելի է շուտ նուաճել, եթէ նրան չօգնէ միւս կողմերի ժողովուրդը. բայց մի թէ այն խոստացված չէին, վայր ի վերոյ բարենորոգումները կարող են այնչափ գոհացում տալ հայերին, որ նրանք չօգնեն Նիլիկիային...

Հայաստանը, ամբողջ Հայաստանը և Նիլիկիան պէտք է լինեն Հայերին:

Թ. Գ. Թ. Ա. Կ. Յ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Ն. Ե. Բ.

Տ Ե Գ Ե Կ Ա Գ Ի Բ Ե Բ Տ Ե Լ Թ Ն Ի *

ՊՈՒԼԱՆԸԳ ՇԷՅՆ-ԱՂՈՒՊ ԳԻՂԻ ԲՆԱԿԱՅ ԿՐԱՅ
ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԵՆԵՆ ՄԻ ԹԵՐԹ.

Վիւզս Պուլանը գաւառի մէջ երկու հարիւր տունէ բաղկացեալ հայաբնակ գիւղ մընէ, որ գայմագամանիստ գիւղէն, այն է Կոփէն, միայն մէկ ժամ հեռու է: Սոյն գիւղի հայ ժողովրդին կրօն հարստահարութեանց մանրամասնութիւնը մի առ մի նկարագրելու անկարող եմ: Այս գիւղի բնակչաց կրօն հարստահարութիւնը թէ կառավարութեան կողմէն, թէ համախոհներու ու տասանորդ գնողներու կողմէն անթիւ ու անսահման են. մենք միայն կը պատմեմք ձեզի ներկայ ժամանակայ դէպքերը:

Լուսաստանի երկուքէն մինչեւ տասն (2-10) ոստիկան եւ կամ թէ զինուորք կուղարկուին գիւղերը տուրք հաւաքելու. այս ոստիկաններէն ամեն մէկը օրական առնուաղն տասնեւհինգ քաշ դարի կը կերցնէ իւր ձիուն, երկու հաւ մորթել կուտայ ի բաց առեալ իւղ բլղուր, մածուն, կարագ, հաց ու զիւղացոց ամենաաղնիւ կերակուրները: զորս բռնութեամբ կստանան առանց ստակ մը վճարելու: Ոստիկաններէն եւ կամ զինուորներէն խոտի եւ կամ յարդի եւ իւրեանց կերածներու համար դին պահանջելը քեզեկա՛յ յանցանք է:

Տուրք հաւաքելու եղանակի պատմութիւնը յոյժ սրտաճմլիկ է: Աղքատ արք եւ աղքատ կանայք տրոց համար ախոռներու մէջ բանտարկել, ծեծել ու թքնել անպատեհ հայհայկան խօսքեր ըսել հասարակ եւ սովորական բանեղած են, Մի անգամ ծեր մարդէ մը տուրք պահանջեցին, խեղճը ըսաւ՝ յայժմ դրամ չունիմ, կը խնդրեմ՝ գոնէ երեք ժամ ինձ ժամանակ տուէք երթամ ուրիշէ մը պարտքով առնեմ եւ բերեմ տամ ձեզի: Բայց գաղանատիրոս հարկահան ոստիկանը անոր մօտիկ չընկելով՝ հրամայեց զինուորներուն զայն ողջ ողջ թաղել փոսի մը մէջ եւ միայն գլուխը դուրս թողուցին. հողէն: Եւ վիճակին մէջ խեղճի գլուխը կապտակէին եւ երեսին կը թքնէին եւ այնքանով ալ չը բաւէ կանանալով անոր երեսը թրեով ծեփեցին. թշուառն ի սրտէ մահ խնդրեց, բայց մահն եւս իւր երեսը դարձուցած րո տնկէ: Եւ այդպէս ամբողջ 24 ժամ պահելէն ու չարչարելէ զկնի հանելով բռնա՝ դրեցին, եւ երեք օր

*Տես «Հնչակ», Nrs 6 և 7.

յիտոյ արձակեցին: Աղբատ այդ մը եւ աղբատ կին մը կանչելով գիւղապետի սենեակը տարին եւ անոնցմէ տուրք պահանջեցին եւ երբ ասոնք բացասական պատասխան տուին ըսելով թէ չունինք որ տամք, առ այժմ ուրկից կոնանք տուրք վճարել, ուստի տուէք մեզի ժամանակ գնանք մեր անէն աման ծախենք եւ գինը բերենք ձեզի տանք: Բայց ասոնց ալ մտիկ չընելով ելան այդ այդ եւ կինը ծեծելով հեծցուցին իրար վերայ՝ նախ մարդուն հրամայեցին հեծնալ կնոջ վերայ եւ ապա կնոջ՝ որ հեծնէ մարդու վերայ, իսկ իրենք դիտելով այդ եղկելներու կարծիքը բարձրաձայն սկսան խնդալ անոնց վերայ, եւ երբ այդ թշուառք ամօթահար կուգէին իրարմէ հեռանալ, նորա չէին թողնել, այլ հայհոյելով ու ծեծելով կտախտէին շարունակել: Յուրք հաւաքողներու ըրածները մի ըստ միովէ գրեմ, գուցէ մարդկային համեստութեան գէժ՝ կը մեղանչեմ: Անցնալ տարի գրեթէ ձմեռ. աստեւ, երբ երկինք սեւաթուր ամպերով մթադնած անձրեւախառն ձիւն կը տեղար, ինչո՞ւ գիւղացւոց աները սաստիկ կը կաթնին, այնպէս որ չունէին ցորեկը նստելու եւ գիշերը բնելու մէկ փորձիկ տեղ մէկալ կողմէն սովը սաստիկ կը տանջէր, այնպէս որ բազումք քիչ մը թնի չունէին ուտելու եւ կամ կտոր մը կորեկ, որով իւրեանց անօթութենէ լացող մանկանց ձիւն ու աղաղակը կարէին, եւ բազումք անօթութենէ սեւ հող կը մանէին: Այդ ժամանակներ յիսնապետ մը տասն հեծեալ ձիաւորներով հանդերձ եկաւ տուրք հաւաքելու, միեւնոյն ժամանակ կառավարութեան հրամանը իգործ գնելու համար ժողովեց արք եւ կանայք, նախատեց, բանտարկեց, ուսնց անասունները վաճառեց եւ ուսնց ալ մէկ օրան ուտելու հացը, մէկ որոշ գումար մը գրում՝ հաւաքելով գիւղէս մեկնեցաւ: Ինչ որ պատմեցի տուրք հաւաքողներու նկատմամբ՝ նոցա ըրածի մէկ տասներորդը սեպելով՝ անցնինք ուրիշ կէտերու վերայ խօսելու: Գայմագամը մարդ խրկելով գիւղիս գլխաւորները իւր ժողովանք տարաւ, ասոնց բոլորն ալ այդ տեղ հասնելէն զինի բանտարկեց առանց հարցաքննութեան եւ առանց նոցա յանցանքներ ըսելու, մէկ քանին ալ խրկեց Բաղէշ կուսակալին: Այս պատճառաւ առնուազն 60 օսմանեան լիւր գիւղացիներէն առնուեցաւ իւր փրկանք թէ Բաղէշ եւ թէ այստեղ: Այդ գումարը յայտնի կերպով ոստիկաններու միջոցաւ գիւղէս հաւաքեցին: Քիւրտ ցեղապետ Այեալ աղան, որ տակաւին համարիկէի դայմագամ է, կառավարութեան ըրածը տեսնելով եւ ըսելով ըսաւ. «Կառավարութիւնը մեզի ընելու բան չը թողուց, ինքը կը կողոպտէ զհայեր»: Քիւրտերն որ այժմ համարիկէ են, կառավարութեան այս ընթացքէն քաջալերուելով, դարունը ծագելուն պէս իրենց աւերիչ գործերը սկսան: Օսմանեան բանակին մէջ գործածուած զէնքերով զինեալ սկսան կողոպտել գիւղացիներս, ոչ թէ դադանի՝ այլ յայտնի: Զէնքերով զինեալ կուգային խումբ խումբ կը պլտտէին գիւղիս մէջ, տուններու մէջ կը մտնէին եւ ինչ որ հոն տեսնէին՝ կառնէին կերթային, տան տէրը կամ գինը պէտք է տար եւ տունէր անոնց ձեռքէն կամ թէ կը տանէին: Այս անցեալ ամառ 10-ը ձիաւոր համարիկէ, արեւը մայր մտնելէն մէկ ժամ վերջ, յարձակուեցան գիւղիս վերայ, ոչխարաց երկու հօտեր քչեցին եւ իրար խառնելով ընտրեցին երկու հարիւր լաւ ոչխարներ առին, գնացին: Անփառապէս լուր տարածուեցաւ գիւղացւոց մէջ, բայց արդէն ոչ էր: Կառավարութեան բողոքեցինք. վերջինս երեսունի չափ զինուոր եւ աստի-

կան խրկեց ոչխարներն եւ առնելու, ասոնք գնացին հասան աւաղակաց, աւաղակներ դարձան հրացանով զարնել զինուորաց: Անփառապէս հրամանատարը փող հընչեցնել տուաւ, զօրքերը իսկոյն ձիաններէն վար իջնելով գետնի վերայ պառկեցան, մինչեւ որ աւաղակները գնացին հեռացան, իսկ զօրքերը հեծնալով ձիանները եւ դարձան: Երբ հարցուեցաւ զօրապետին, թէ ինչո՞ւ հրաման չը տուիր զօրաց աւաղակներու վրայ կրակ ընելու, նա ալ պատասխանեց «Մեզի տէրութենէն հրաման չը կույ անոնց վրայ կրակ ընելու, եթէ անոնցմէ մէկը սպաննուի, մեզի աղատուելիք չը կայ: Ոչխարներ տանող աւաղակները համարիկէի հազարապետ Ռիւլայ աղայի ծառաներն էին: Այս բանը թէ կառավարութիւնը եւ թէ հասարակութիւնը շատ աղէկ գիտէին: Ազօրիքները (ջաղաց) կողոպտեցին, բարերը կատորեցին, գործիքները հանեցին տարան: Այնպէս եղաւ որ ալ մարդ չէր համարձակէր ազօրիք երթալու քիչ մը ցորեն կամ կորեկ եւ կամ գարի աղալու: Գիւղէս մարդու մը երկու ազօրիքներ գրեթէ անգործ մնացին, երկու տարուան չափ՝ քիւրտերը զանոնք աւերած լինելուն պատճառաւ: Ահա թէ որոնք էին սոյն վիճակներ ընողներ. խաչուցիք եւ Վանքաճորցիք, մանաւանդ առաջինները: Խաչու գիւղէս ժամուկէս հեռու է, ասկէ տասնու հինգ տարի առաջ այդ գիւղը հայաբնակ էր, իսկ այժմ միայն մէկ հայու տուն կայ հոն: Ավանի աղան եկաւ բռնութեամբ նստաւ այնտեղ. նորա բռնութեան պատճառաւ հայք գաղթեցին անկէ: Այդ գիւղացիք տան պատեր ծակելով պանիր, իւղ, ոչխար, եղ, կով, ցորեն եւ տան բոլոր կահ կարամիք գողցան տարան: Այս գողցուած բաներէն երբեք բան մը յետ չը դարձաւ տիրոջը, չարագործ մը չը պատժուեցաւ: Կառավարութեան բողոքեցին գիւղացիք, բայց եւ այնպէս անոնց բողոքներն ու աղետագրերն անխելի եւ անտես եղան, ինչո՞ւ, վասնզի պատուէր եկած էր տէրութիւնէ որ համարիկէներու ըրածին համար բողոք չընէր, եթէ ընէք ալ պարապ տեղ ծախք կընէր, վասնզի վրան չը հարցներ կառավարութիւնը: Կուգային կը գողնային գիւղացւոց անասունները եւ այլ բաները եւ չորս կամ հինգ օր վերջ կուգային կըսէին «մենք գողցած ենք»: Աղբատ գիւղացւոց սիրտն կը վառէր, բայց ի՞նչ կրէային ընել, քանի որ կառավարութիւնն ալ իւրեանց բողոքին բնաւ մտիկ չընէր:

Գաղափար մը տալու համար թէ որչափ անասուններ տարած են գիւղէս այս վերջին տարւոյ մէջ, միայն թիւը յիշելով բաւ սեպենք: Ցարած են 120 եղ եւ նոյնքան ալ կով, 500 ոչխար, 30 ձի եւ 100 լիւր իւղ:

Գանք տասանորդ գնողներուն: Կառավարութեան օրէնքով պէտք է որ գիւղացիներէն առնին տասէն մէկը, սակայն մինչեւ օրս տասէն մէկ առնուած չէ, այլ չորսէն կամ հնգէն մէկ առնուած է գիւղացիներէն: Իսկէ զատ ամեն տարի կալելու ժամանակ հնգէն մինչեւ տասը ձիաւոր կը բերէին. գիւղացիները պարտական էին անոնց ձիաներուն հօգս եւ խնամք տանիլ: Միւլ-թաղիմները գիւղիս մէջ մէկ ձիու համար օրը տասը քաշ գարի կառնէին գիւղացիներէն առանց գին վճարելու, յարդէն, խոտէն, առոյտէն զտա:

Դուրս տարին գօլջի եւ մամուր անունով վեցէն մինչեւ տասներկու մարդ գիւղի մէջ կը նստէին մինչեւ կալելու վերջ, գիւղացւոց կողմէն օրը երեք անգամ կուտէին եւ կը խմէին ձրի: Երգոյ ընթերցողը հաշիւ ընելով կրնայ գաղափար մը կազմել թէ օրը որչափ

ծախք եղած է, եւ մէկ օրուան ծախքը բազմապատկել ամսոյն թուով, ամսուան ծախքը բազմապատկել չորսուով, որովհետեւ տարուայ մէջ չորս ամիս տասանորդ գնողներն եւ կամ ուրիշ խօսքով ըսած, կապալառուներն՝ իրենց արբանեակներով գիւղի մէջ կը նստէին եւ բացի ուտել խմելէ, տարին ալ 250 քիլէ ցորեն, նոյնքան ալ գարի, այնքան ալ կորեկ եւ այլ բաներ գիւղէս ձրի եւ այն ալ բոնի կերպով տարած են: Պուլանըխայ գարին հինգ միլու կոտ է, իսկ մի կօտը կը կշռէ երկու լիտր:

Չորս կանայք եւ չորս հատ ալ գեռատի օրիորդներ բոնի կերպով տարուած են գիւղէն եւ այն ալ զօրքերն են տարեր քրդերուն հետ: Տէր Կարապետ բահանայի կոյս աղջիկը զօրքեր բոնի տարան, տասը օր պահեցին. այդքան ժամանակուայ մէջ ծննդով, հայհոյելով եւ սպառնալով ստիպեցին մահմեդականութեան կրօնը ընդունել. բայց նա անոնց հասցուցած բոլոր շարանքներուն ամենայն համբերութեամբ տոկաց, ինչ ըրին չորին՝ մահմեդականութեան կրօնը ընդունեց: Կիշտ կըսէր հետեւեալ խօսքերը, երբ իրեն այդ մասին կը զիմէին, թէ՛ «կը մեռնի», եւ ինձ կսպանեմ, կը խեղդուիմ ու չեմ ուրանար իմ հաւատս»: Ստիպուեցան կրկին անգամ հօրն յանձնել: Այդ աղջիկը արդէն նըշանուած էր, երբ տաճիկ զօրքերը տոնականցին, իսկ երբ կրկին ետ վերագարծուցին, այն ատեն հայրը անմիջապէս պատկեց, որպէսզի կրկին շտուանգեն: Իսկ Կարօ Եղօի կոյս աղջիկը առեւանգուելէ զինի բնաւ հօր երես չը տեսաւ: Մեկալ երկու կանայք քրդաց բով մնալով բռնութեան եւ ճնշման տակ ուրացան իրենց կրօնը եւ ընդունեցին մահմեդականութիւն:

Մուստաֆայի տղայ Մահմեդ ցերեկ ատեն յարձակուելով գիւղիս ամենակտրիճ Յարութ անունով երիտասարդին վրայ՝ դաշտով մարմնի զանազան մասերի վրայ հօթն հարուածներ տալէն զինի խրեց սրտի մէջ եւ սպանեց: Խեղճ երիտասարդը բոլոր ժամանակ միայն մի փայտով կը պաշտպանէր ինքզինքը: Մահմեդ զայն ըսպանեցէն զինի ինքը կը փախչի ի Խաչու Տարեհ աղայի մօտ, որ համիտէի դայմագամ է այժմ:

Քանիցս լուր տրուեցաւ տեղական կառավարութեան թէ ոճրագործ Մահմեդ Տարեհ աղայի քովն է, զօրք զրկի, բերել տուր, եւ կամ թէ յիշեալ աղայէն պահանջէ, կառավարութիւնը երբէք չը լսեց մեր բողոքի ձայնը: Այժմ յիշեալ ոճրագործը, այսինքն Մահմեդ, ի Խաչու ամուսնացած է եւ յայտնի կը պատի:

Բացի Յարութէն՝ ուրիշ երեք հոգի ալ սպանուած են մօտ օրերս, սակայն մինչեւ օրս չը կարողացանք անոնց սպանման պարագաներու մասին մանրամասն տեղեկութիւն առնել միայն այսքան գիտենք, որ այդ երիտասարդները զիշեր ատեն իրարմէ բաժնուելէն յետոյ մինչեւ տուն հասնելին՝ երկուսն ալ կսպանուին եւ սպանողներն ալ եղած են քրդերը. գիւղացիք զանոնք յաւանէ յանուանէ կը ճանաչեն:

Ամեն տարի խոտ եւ ցորեն հնձելու ժամանակ Խաչուի, Փիրանայ եւ Տըրտօփայ աղաները իրենց ծառաներ եւ կամ մշակները կը զրկեն գիւղը գործաւոր տանելու. Երանի թէ ընթերցողը ներկայ լինէր որ տեսնէր անոնց ըրածները: Երեկոյեան ով որ գտնուէր ըլլան գիւղացիներէն կը բռնեն եւ ախոտի մը մէջ կը բանտարկեն մինչեւ առաւօտ, իսկ անոնք ալ, որ երեկոյեան ձեռք չեն խնար, կը փախչին կերթան իրենց գործի տեղը կամ այլ ուրեք, իսկոյն ատոնց ետեւէն ալ կերթան, կը բռնեն եւ ծեծելով կը քանեն: Խեղճ գիւ-

ղացիք երբոր կերթան, պարտ են առանց վարձի երկու օրէն մինչեւ շաբաթ մը աշխատիլ առանց մի տրտնջ յայտնելու: Երբեմն գիւղի մէջ չեն գար գործաւոր ուղեւ, այլ գիւղացոց գործելու տեղը կուգան, կը ժողովեն, կանոնն եւ կերթան: Այսպիսի գործաւորք պարտ են իրենց տուներէն հաց տանել իրենց հետ, եթէ ոչ աւսթութեանէ կը մարին: Արդեօք գերութեանէ ինչ տարբերութիւն ունի գիւղացոց այս աննախանձելի վիճակը: Խաչուի Փիրանայ եւ Տըրտօփայ աղաները հինգ հարիւր գործաւոր գիւղէս բռնութեամբ տարին եւ ձրի աշխատեցուն:

Հայեր այս անօրէն երկրին մէջ, այս անխղճմտանք կառավարութեան մէջ ամեն օր կը շարժարուին եւ կը խաչուին: Այսքան զրկողութիւն եւ հարստահարութիւն գիւղացւոց ընելով հանգերձ՝ այժմ իսկ կառավարութիւնը մեղմէ կը պահանջէ, որ մենք գոհունակութեան եւ շնորհակալութեան մաղպաթայ կնքենք: Այդ բռնակալ տէրութիւնը ամօթ ու պատկառանք չունի:

Քանի մը խօսք ալ Սանոյ բանտարկելոց վրայով եթէ գրեմ, որ այժմ ի Բաղէշ կը գտնուին, յուսով աւելորդ չը լինիր եւ չը պիտի լինի ալ: Կուսակալ Թահսին փաշան առանձին սենեակի մը մէջ տանել կուտայ բոլոր Սանոյ բանտարկեալները եւ ինքն ալ անձամբ հօն կերթայ, կըսէ յիշեալ բանտարկեալներուն թէ «ըսէք թէ Բաղիշոյ հայ իշխաններ, հարուստներ եւ երեւելի վաճառականներ մարդ եւ զրամ չը կեցին ձեզ ըսելով՝ զրամ մեզմէն եւ մարդ ձեզմէն, քաջ եղիք, կառավարութեան եւ քրդաց դէմ գնելով ապստամբեցէք: Երբոր այսպէս ըսէք ձեզ բողոքիդ ալ մեծ մեծ ընձաներ տալով եւ բարձր պաշտօնների հասցնելով բաց կը թողնեմ բանտէն»: Բանտարկեալները կը պատասխանեն թէ «որքէք մենք այդպէս բան լսած չենք անոնցմէ եւ քանի որ չենք լսեր, չենք ալ կրնար ըսել հիմա ձեզմէ լսեցինք այդ բաները եւ եթէ ուրիշ տեղ մեզմէ հարցունեն՝ կըսենք որ փաշայէն լսեցինք»: Այն ատեն հրաման կընէ, որ բանտարկեալներեն մէկը կախեն սենեակին առաստաղէն. հրամանը շուտով ի գործ կը դրուի: Եւ երբոր խեղճ թշուառը կը խեղդուի, այն ժամանակ խեղդամահ եղած մարմինը գետնի վրայ դնելով միւսներուն դարձեալ կըսէ. «թէ որ ըսածիս պէս թագրիր չի տաք, այն ատեն ամենքդ ալ այդպէս կախել կուտամ»: Բանտարկեալները նորէն կը պատասխանեն վեհանախարար. «մենք ի՞նչ ենք ըրեր տէրութեան, մենք հանգիստ նստած էինք մեր տանը մէջ, դուք ձեր զօրքերով եկաք յարձակուեցաք մեր վրայ, մեր կանայք, մեր զաւակուք եւ մեր եղբայրները սուրի բերնէ անցուցիք, մեր հարսներ եւ մեր օրիորդները ձեր զօրքերը եւ քրդերը գերի տարան, մեր տուններն այրեցին զօրքերը քօ հրամանաւ. մենք անոնցմէ աւելի չենք, մեզ ալ սպանէ, ալ ապրել մեզի ի՞նչ պէտք է»: Այն ժամանակ կուսակալը սաստիկ կը բարկանայ, կը հրամայէ որ կրակ պատրաստեն եւ երկաթեայ շիշեր մէջը կը գնէ եւ երբոր աղէկ մը կը կարծին շիշերը, այն ատեն հանելով կրակէն մէկիկ մէկիկ այդ հրաշէկ շիշերով կսկսի Սանոյ բանտարկելոց մարմինները տաղել, այս սաստիկ եւ տաժանելի շարժարանքին չը կարողանալով դիմանալ երեք հոգի կը մեռնին:

Մուրատ Էֆէնտիին ալ շատ մը տանջանք եւ շարժարանք տալէն վերջ, կողով մը սառույց լեցնել կուտայ, կողովը կը կախեն վզէն եւ բորիկ կը կայնեցնեն ձիւնի վրայ մինչեւ որ մարած եւ անկենդան գետնի վրայ կ'ը-

նայ: Այս բաները ըրած ատեն ժամանակը գիշեր կըլայ: Այժմ ալ մէկ հատ շղթայ դրած են Մուրատ էֆէն-տիի ոտքները, մէկ ձեռքն ալ մէկ ոտքին հետ մկտեղ դրած են շղթաներու մէջ:

Արդեօք արդարաւոր գատաւորք չի կան աշխարհի վրայ որ լսեն մեր բողոքը եւ իրաւունք ընեն մեզ:

26 փետրուար 1895.

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊՈՒԼԱՆԵԳ ԳԱՒԱՌԻ ՄԻՐՊԱՐ ԳԻՒՂԻ

Թ. Իւրք կառավարութիւնը մեր գլխուն հետեւեալ չարիքները հասուցեր է:

ա. Մեր եկեղեցին կը գոցուի և կը կողոպտուի: Ամեն մէկ բրիտանացի թրքական ծէսերուն համակերպած է ակամայից, բրիտանական կրօնը յայտնապէս այլևս գործադրել անկարելի է: Արօնի ազատութիւն չունինք:

բ. Տէրութեան հարկապահանջներ, այսինքն կամ արքունական դօրք կամ զապտիայ ըստած գործակալք, երբ աղքատիկ գիւղեր կը գան տէրութեան անտանէ-լի պահանջներ հաւաքելու՝ նոյն գիւղէն եթէ 1000 դուրուշ աւելը ժողովն՝ 500 դրշ ալ ծախք կընեն մեր հաշւոյն, թող որ տեսակ տեսակ ամաններէն կուտան թէ էրիկ և թէ կնիկ մարդկանց:

գ. Գիւղացին վերջին չքաւորութեան ենթարկուած է: Երբ թահալտար գայ կը գիմ, նոյն չքաւոր գիւղացուն տունը եթէ էրիկ մարդ գտաւ, զանոնք պիտի բերէ կապէ ծեծէ, մարդ չեղաւ կնիկները պիտի ծեծեն, մէկ օրուան ու-տիկը ըլլայ՝ պիտի բաշեն բերեն, չեն խղճար թէ ա-նօթութենէ պիտի մեռնին:

դ. Այրք գիւղեր կը ծախուին կառավարութիւնը պի-տի փնտռէ թէ միւլթէգիմներուն՝ որն է ամենէն անգութ լեւ անխղճ բիւրդը և անոնց պիտի ծախէ և պաշտօն-եայք ալ ձեռքի տակէ կընկերանան հետը: Կա կը գայ բանի մը մարդիկներով և կը նստի. իրեն և մարդկանց և իրենց ձիաների ուտեստը բռնութեամբ գիւղէն պի-տի պահանջեն: Իսկ երբ կալ մը կը չափեն, որ պէտք է եօթնուկէսէն մէկ առնեն, այնպիսի դիրք մը կը բռ-նեն որ երեքէն կամ չորսէն մէկը կառնեն: Եթէ կալին տե-րը խօսի թէ այդ իրաւունք չէ, կը ծեծեն, կը հայհոյեն և կընեն յգնայ կառավարութեան բողոքէ: Եթէ մարդը ում բողոքէ, կառավարութիւնն ինքն ալ գաղտնի ընկեր և գաղափարակից է անոնց:

զ. Վիւրդերու ըրածները բողոքովն անպատմելի են երբ գարուն կը լինի՝ խուժը խուժը ձիաւորներ գիւ-ղերը կուգան, ինչ որ տեսնեն՝ կը յափշտակեն, արտերը երկրագործի ձեռքէն կառնեն այն մարդիկ, որ տէրութիւնը յհամիտեայ անուամբ իրեն որդեգիր ըրած է. ալ ո՞վ կա-րող է խօսիլ կամ բողոքել բրգաց գէմ տէրութեան նշանը ճակտին, սուրը մէջքին կը յարձակի մշակին վրայ, որ վարոց մը առած իր արօրը կը դարձնէ, կը զարնէ կը սպաննէ, եղները կը տանի:

Այս բանի մը տարուայ միջոցին այսպիսի գրութեամբ մեր աղքատիկ գիւղը, որ երեսուն երկու տնէ կը բաղ-կանար, հիմայ վեց տուն մնացեր են, ան ալ ամենքը պարտ-քերու մէջ, խեղճ, անօթի և անոնք ալ այս գարուն պիտի թողուն փախչին: Մինչև հիմայ յափշտակուել է մեր գիւղէն 1000 ոչխար, 100 եղ և կով, վառվեր է 200 բարդ ցորեան և սպանուել է մի մարդ:

Բաղդեցի մահտեսի խաչատուր բանի տարիէ եկեր մեր գիւղ արտեր գնեց, խանութ բացաւ առևտուրը-նելու և ջաղաց մը գնեց: Մեր գաւառիս ծանօթ Տրէ

աղան մարդիկ խրկեց խեղճի քով, ամեն բան հանել տուաւ, ալ սերմ չը թողուց արտերը տարաւ: Այնն մարդիկ խրկեց խեղճին խանութը, ուր երեսուն լիւրայի չափ ապրանք կար, հանեց տարաւ, յետոյ սոխից որ արտերը ծախէ, և մինչդեռ արտեր երկու հարիւր լի-ւրայ կարծեն, 40 լիւրայ միայն ձգեց վրան, խլեց ար-տերն ալ ձեռքէն: Մահտեսին գնաց բաղքէն նորէն ապրանք բերաւ, կրկին Տրէ աղան իր ծառաներ խրկեց անոր խանութ, թալանեցին ամեն բան: Վարնան ալ ինք և իւր եղբայր Մէհմէդ Էմին եկան անոր խանութ բան-գեցին մահիճը և տարին, նոյնպէս ալ տարին ջաղացն, որ առած էր մէկ ընկեր քիւրտէ յիսուն ոսկու ծախք ընելով: Այս բանի անգամ է կը ծեծեն խեղճը, և նա կառավա-րութեան կը բողոքէ, ոչ լսող կայ, և ոչ մտիկ ընող: Ահա այս ալ բաղաբացու վիճակ որ գիւղերու մէջ առևտուր կընէ:

Վերջապէս յետին աստիճան անողորմ կերպով հա-րստահարութեանց և զրկանքների ենթարկուած ենք: Հա-րահատեալ ձեր գթութեանց կը դիմենք որպէսզի բա-րեհաճիք այս մեր անտանելի ցաւերին փոքր իշատէ գեղ և դարման մը ընել, որով զմեզ երախտապարտ կը կացուցանէք ձեզ և ձեր տէրութեանց:

Միւրապար գիւղի ընդհանրութեան կողմէն՝
Խաչիկ, Գասպար, Նատո, Մանուկ, Հլլաթ,

ԲԱՆԷՇ, Ապրիլ 18 1895.

Առևտակալ Թահսին փաշայի տեղէս հեռանալէն վերջ հայ ժողովուրդը կարծեց թէ քիչ մը ազատ շունչ պի-տի քաշէ, բայց խաբուեցաւ: Կառավարութեան իր նա-խապէս բռնած ընթացքէն մաղ մը անգամ շեղած չէ և տեղւոյս աղտոտ, գարշահատ ու մութ զընթանին մէջ կը մնան 18 հազի, որոնք Թահսին փաշայի հրա-մանաւ բանտարկուեցան, որպէսզի Եւրօպական բնիշնե-րուն բողոք չը գրեն այս տեղեր և Սասունի մէջ կա-տարուած կոտորածի և խժոժութիւններու մասին: Այդ 18 անձինքներէ դատ, որոնք քաղաքի երեսելիները կը համարուին, բանտարկուած են ուրիշ շատեր առանց որ և է յանցանքի, առանց հարցաքննութեան և առանց վճոխ:

Առևտակալ Թահսին փաշայի զօրաւիգն և միջնորդը, իր մատնութիւններով և վատութեամբ ամենու աչքին ատելի դարձած Պապալեան մ. Աղաճան աղան, որ կուսա-կալի այստեղ գտնուած ժամանակ ինքզինքը շատ զօրաւոր կզգար՝ այս կիւրակէ եկեղեցի գալու ժամանակ ժողո-վրդեան կողմէ դուրս հանուեցաւ, անգամ մ'ալ եկե-ղեցի չը մտնելու պայմանաւ. խօսք կայ, որ թիւրքանա-լու միտում ունի:

Այդ վատի անունը տալով աւելորդ չենք համարիր այստեղ յիշել անտեղի և սխալ լուր մը, որ շատ զար-մանք պատճառած է մեզ, և որու միտքը անհասկնալի է: Մեր Պոլսոյ հայրենակիցներու ըսածին նայելով իբր թէ անոր եղբայր Խաչիկ աղան սպաննուել է այստեղ և առոր մասին կարգացեր են Եւրօպայ հրատարակող հա-յերէն թերթի մը մէջ *) մինչդեռ յիշեալը իր բնական մահուամբ մեռաւ: Այսպիսի անտեղի լուրերու լրագիր-ներու մէջ գրուելը շատ զարմանք կը պատճառէ մեզ:

Գիւղերու մէջ թուրք մոլեռանդ ժողովրդի բար-բարոսութիւններն անկարագրելի են: Ատոնց գործած չարագործութիւններու երեսէն հայ գիւղերը ամայա-

*) Տես յՊրօշակ՝ № 2 փետր. 95.

նալու վրայ են: Բաղարէս Ծ ժամ հետի Բռնաշէն գաւառի մէջ Սրմէնկանք գիւղացի Արապ Շաքրի եղբայր Մահմուտն աթաքը ցորեկ ժամանակ իր արբանեակներով յարձակեցաւ Վարդնոց գիւղի Մ. Աւետիսի տան վրայ և ժամ մը կռուելէ վերջ յաջողեցաւ սպաննել անոր երկու երիտասարդ որդիները, կարապետն ու Յովհաննէսը և իրենց ունեցած ամբողջ կահ կարասիքը և տաւարները յախշտակելէ վերջ իրենց գիւղը դարձան: Կառավարութեան բողոքեցին, բայց լսող չեղաւ:

Ամսոյ 8-ին Խարախանեան Կերսէս վարդապետը մեկնեցաւ ասկից, ընդ հսկողութեամբ ոստիկան զինուորաց գէպի Տիգրանակերտ, ուսկից շալէպի կամ Խարբերդի ճամբով պիտի երթայ ի Վ. Պոլիս:

Մեր հերոս ընկեր Մուրատը, որ իր ընկերներով Սասունի մէջ բռնուած և այստեղ բերուած էր, բանտի մէջ սարսափելի աննշանքներու ենթարկեցին: Այս օրեր անողջական տեսակէտով բաւական գոհացուցիչ սենեակի մը մէջ գրին առանձին, այդ բան եւրօպական դժուարներու ազդեցութեամբը եղած է: Իր և իր ընկերներու մասին մանրամասն կը գրեմք յետագային:

Վերջին ժամանակներս հայկական խնդրի մեծ կարեւորութիւն ստանալը թշնամութիւն առաջացուց հայերու և թուրքերուն մէջ, այնպէս որ պզտիկ շարժառիթ մը պէտք է, որ այս երկու տարրերն իրար բաղխին: Այժմ՝ երկուստեք աշխարհին յառած են եւրօպայի վրայ թէ ինչ պիտի ըլլայ վերջը:

*

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՎԵՍՊՈՒՐԵԱՆԵՐ

ՔԻՆԱՆՍԵԱՆ ՏԱԳՆԱՊ ՎԵՍՊՈՒՐԵԱՆԵՐ ՄԷՅ:

Կը լինի մօտ 4-5 տարի, որ ընդհանուր և անհրաժեշտ է դարձեր, իւրաքանչիւր անհատ, առաջին պատահման նոյն խնդրին կըսէ թէ՛ յայտարարները քէսատ են՝, և այլն, (առեւտուր դադրած ու դործ չեղած կը նշանակէ): Այս խօսքը ըսինք ընդհանուր է ամենքի բերնին մէջ: Սակայն շատեր այդ խօսքը լաւ չուսումնասիրելով՝ այդպիսի ապուշներ կը մնան անգիտակ իրենց ներկայի և ապագայի վրայ:

Համարի կործանող քաղաքականութեան և մահաւորական վայրագ տարրի իշխողութեան և սպառնողութեան իբր հետեւանք արդիւնաբերող տարր՝ հայութիւնը կեանքով լրանալով բանտեր, պանտաղաւայրեր, թափուր և անմշակ մնացած են գիւղերու և գաղտնիք երկու երրորդը: Պարտաւարտութեամբ և լեռներ մնացել են անխառն և անհովիտ: Մի ժամանակ հայ գիւղացիներով շէն եղող վայրեր, այսօր դարձեր են որչ պաշտպանութեամբ կառավարութեան լիբը և աւաղակ պաշտօնեաներու, համարիւններու և զաւթիւններու: Հացով հոգեւոր Արքեպ (Քաղաքները): Այժմով և Ալաշկերտ-նահիկները մշակութեան երկու տեսած չեն գրեթէ երկու երեք տարիէ ի վեր, որովհետեւ ատոց արդիւնաբերող ձեռքերը՝ հայեր՝ լինեցած են, մեծաւ մասամբ գաղթելով և սրախողող լինելով: Այս անգամ հոգն եւս միանալով արիւննուշտ շէնացունողների հետ՝ մէկին 10-12 եւ աւելի արդիւնաբերելու փոխարէն՝ հազիւ մէկին երկուքովէս կամ երեք կարդիւնարներն արմախք: Այդ պարագային ալ թրքական կառավարութիւնը բոնի հայերու առնեղէն ունեցած ցորեն և այլն քաշելով՝ ձերբապէս առնիկներու բաշխեց գիւղերով: Հայերուն ա-

ւելի ունենալն ալ յանցանք է: Եթէ իմացուէր թէ այն ինչ հայն այսօրուրէն իզատ վաղուան հաց ունի, կը խուզարկուէր այդպիսոյն տունը, կը գրաւուէր գրտնուած սնունդը եւ կը բաշխուէր այն տաճկին, որը չէ թէ այսօրայ կամ վաղուայ սնունդ չունի, այլ գոնէ չէ այն հային նման՝ որ անտուգ տան մէջ է մնացեր: Արդէն քաղաքացիութեանը իւր հաւաքած ստակով, (մեծաւ մասամբ հայերէն) ձրի հաց կը բաշխէր կարելի է ասել ընդհանրապէս տաճիկներուն, միջազեռ հայերուն հարկերին տաս հազիւ օրական ուտելու հաց միայն ունի:

Բայց այսուամենայնիւ կառավարութիւնը ոչ միայն չօղնէր անկեալ հայ գիւղացոյն՝ այլ սովորական տուրքերը գանձելէ իզատ, հակառակ իցոյց աշխարհի դժած տրոյց նիզամնամէն, կանէ գիւղացիէն իր չունեցածը, կը հաւաքէ մինչեւ իսկ այժմանէ ապագայ տարին եւս ուր տուրք եւ բաւական տարիներէ աստի բոլորովին անգործագրելի եղող զանազան ապօրինի տուրքերը հաւաքեց տուրք անքն իր ով հանգերէ... Թերեւս հարցնելու լինի մէկը՝ ինչ կար որ ինչ առնէր, զի միշտ կըսուէր տմեն ինչ լինեալ՝ բայց պէտք է գիտնալ որ մեր թշուառ ժողովուրդ ինչքան համբերութիւն ու սովորութիւն ունի, նա կաշխատի չարաչար. ամառ իբրեւ մերենայ օրուայ 17-18 երկայն ժամեր չունի ոչ դադար և ոչ հանգիստ, որպէսզի կշտացնէ, եթէ կարելի է ըսելու, սպառող տարրի, թիւրքի, որկոր:

Հայն բոլորովին ինկաւ այսօր նիւթականապէս եթէ հանգամանքները շարունակուին տեւել տակաւին՝ համարիւններու չը թալնած չը կողպատած ինքը կառավարութիւնը կամբողջացնէ: Կը ձեռնէ հայեր հետեւեալ կերպով՝ բոլորովին զրպարտութեամբ յեղափոխական ամբաստանելով հայեր բանտերու մէջ կը մաշկեցնէ, ու կը հալեցնէ, կը ծեծէ, կենթարկէ թիւրքական ամեն տեսակ անբարոյականութեանց եւ շատ անգամ մեռած գիւղիկն (բռնութեամբ մեռած) դուրս կը հանէ բանտէն: Բանտէն ելած իբր յեղափոխական գիւղիկներ տանեալներով կը համարուին:

Հայ գիւղացին ոչ միայն սերմ չունի, այլ օրապահիկ մը անգամ չէ մնացեր: Հնորհիւ կառավարութեան թոյլտուութեան և երբեմն իսկ բացարձակ հրամանաց՝ համարիւնէ, քեւրտ ու պաշտպանութեամբ, կոշտ եւ կոպիտ զաւթութեան ամեն ինչ սպառեցին... Ասկէ իզատ երկրի մէջ տիրող ընդհանուր աւերման, հարստահարութեան կեանքի, պատուի և ընչից անպահովութեան կողմանէ իւրաքանչիւր ընտանիքի անգամ Պօլիս կամ այլուր կը թափառի, որպէսզի իւր ունեցած պարտքերը դոցէ, սղատէ իւր բերրի հողեր՝ երկրագործական պանքայի դրամանէն եւ եթէ կարելի է ասել, թիւրքերու ու կառավարչական պաշտօնեաներու անյատակ քսակը լեցնելու համար օտար հողի վրայ արիւն բրտինք կը թափէ, որ յազեցնէ նոցա ծաւալ... Ընտանիքի մէկ անգամ ալ իրեւ յեղափոխական բանտ կը հեծէ, իսկ միւսն ալ կը տուտալ ընտանեաց ծոցի մէջ, անասունի պէս աշխատելով և ախ ու վախ ընկելով...

Վարամ չը կայ երկրի մէջ, առեւտուր չը կայ, ունեցածդ ամեն ինչ, կաշուածք. կահ կարասիք ծախել կուզես, բայց առնող չը կայ, ամենքը միեւնոյն տեսակ անընկճելի չքաւորութեան մէջ կը տառապին: Անոր ալ կընային դիմանալ, եթէ անգուր թիւրքը չսպառնար իսպառ վերջացնել հայի կեանքը աշխարհէս...

Հիմարացած կառավարութեան փճացած, մերկ ու չիք պաշտօնեաներ, կուտակալէն սկսեալ մինչեւ ամենայնաւոր կոշտ զաւթիւն, եւ զօրքը կրկին անհանուն դրութեան

մէջ կը դառնան. մեծամեծ պաշտօնեայք կառավարութեան երեւոյց մէջ զեղծութիւններ կը գործեն. այդպէս զիկ պաշտօնեաներ իրենց ամսականներ նախապէս կանխիկ կտանան, իսկ մնացեալ յետին պաշտօնեայք, զապարկներ և զօրքեր 8-9 ամիսներով անվճար կը մնան. կառավարութիւնը գործնականի մէջ կը յիշեցնէ խնամակալութեան վարչական կազմակերպութիւնը. յորում պաշտօնեայք ոչ միայն չեն վարձատրուիր, այլ նոքա այս կամ այն պաշտօն ձեռք բերելու համար այսքան լիւրջ դրամ կը վճարեն, անշուշտ ապագային թշուառ ժողովուրդը հարստահարելով կեղեքելով ուղղակի և անուղղակի կաշառքներ ստանալով եւ այլն. . . Այս ամէն զեղծութիւններ սուլթանը ինքն ալ գիտէ: Ընդհանուր զեղծութիւն պաշտօնեաների մէջ եւ ընդհանուր աւերում քայքայում երկրի բոլոր շրջանակների մէջ. . .

Պաշտօնէից ամսականներ ըսինք չեն վճարուիր, սակայն նոքա, չը նայելով՝ յոյսերն են կաշառակերութեան վրայ դրած են. որով մեղք ու շուայ կեանք կանցունեն: Մնանկացած կառավարութիւնը բամպակնին մէջ 8-9 ամիսներով անվճար մնացած զապարկներ աստիճան մը գոհացնելու համար, իւրեանց թողակի տեղ ցունեն բաշխեց, տեղիս չափը (47 օխա) 50-54 զուրուշի գրնով: որոնք ծախեցին ուրիշների 40 զուրուշի գրնով եւ րանի թէ ամբողջ ամսականներ այս հաշուով վճարէր. ամսականներու որոշեալ գումարէն երեք-չորսը կը վճարէ եւ այն ալ հազիւ 2-3 ամսական:

Պաշտօնեայք եւ կամայական կառավարութիւնը նոյնպէս լիւրջ համարած է եւ խայտառակ կը ներկայանայ քաղաքի մէջ եւս, նա չունի ոչ ամօթ ոչ պատկառանք եւ ոչ խելք: Նա՝ կառավարութիւնը կատաղի մի գայլ է, որուն կը զոհուի գառի նման խեղճ հայու թիւեր: Ընկան, պատիւ, խիղճ եւ ամէն բան անոր՝ տաճիկին կը պատկանի. իսկ հայեր ստորաքարջ կեանք մը կը վարեն, չլու եւ հնազանդ ամէն բանի:

Սերճապէս տեղիս ընդհանուր դրութիւնէն ամենապուշտ անգամ՝ միմիկելով այսպէս կը հառաչէ — երկիրը կատարեալ անանկութեան մէջ է եւ մեղ համար վերջացած է ամէն բան. չունինք ոչ խօսքի եւ ոչ խղճի կամ՝ զոնէ իրրեւ մօրդ ապրելու աղատութիւն, աւելի լաւ է մեռնիք քան այս փճացած ու անվայել կեանքը վարենք: Մենայն ատեն այս հարցը կը ծնի իր մտքի մէջ — կառավարութիւնը այսքան անհուն դրամներ կը հաւարէ անխնայ, ոչ հին տուրքերը թողուց անվճար եւ ոչ նոր տուրքերը. ո՞ր կերթայ ո՞ր կը մանէ եւ ո՞ր կը կորսուի այսչափ դրամ. պաշտօնէից շատերու ամսականներ անվճար կը մնան, հապա ինչ կը լինին այդ անհուն գետերը, թէ չէ գող գողից կը գողանայ եւ Աստուած վեր կը դարմանայ. կամ՝ թէ աւազուտ անապատներու մէջ վազող յորդահոս գետերու կը նմանի, որոնք աւազներու ներքին խաւերու մէջ կը կորսուին որչափ ալ յորդառատ լինին: Այդ մեղ հանելուկի նման պիտի մնայ. ապագան պիտի ցուցնէ մեղ որ սուլթանէն սկսեալ մինչ ամենայեւեռն պաշտօնէից մեղկութիւն անբարոյականութիւն, անարդարասիրութիւն եւ այլն բաներ են պատճառ եւ որոնք պիտի գառնան թիւրքաց մօտակայ կործանման պատճառ. . .

Յինանապատի դառն տաքնապ տիրած է Ղասպուրականի մէջ, ժողովուրդը վերին աստիճան չքաւորութեան ու յուսահատութեան մատնուած է, ժողովուրդ մեծաւ մասամբ գաղթելու վրայ է. բայց հաստատ հաւատանք որ Թիւրքիա շուտ պիտի մեռնի քան հայը, որ հինգ հա-

ծիւր տարի է իվեր կը տոկայ, այլ եւս մի ժամ սպասելու կարողութիւն չունի. . .

ՄԻՐԱԶ

95, Ապրիլ 19 Վան.

Տեղիս երեւելի թիւրք հարուստներուն մեր խեղճ գիւղացւոց նկատմամբ արած բարբարոսութեանց, բռնի կողոպտմանց եւ հարստահարութեանց իբր մի նմոյշ հետեւեալ կը հրատարակեմք:

Այգեւստան Գանկոյաների կողմ՝ բնակող Համուտ աղայի մանչերու Ռաշիտի եւ Ապտիլըս համանի երեւելի արարքները Սեւան եւ այլն գիւղերու մէջ:

Պէտք է գիտնալ որ վերոյիշեալ անձինք թուէս 7-8 տարի առաջ համարեա աւօրեայ աշխատութեամբ ապրող մարդիկ էին. իսկ այսօր կանխիկ դրամով եւ ամբողջ կաշառքներն ալ միասին հաշուելով 10-15 հազար լիւրայի կարողութիւն ունին. այս հարստութիւն քիչ ժամանակուայ մէջ գիղած են հետեւեալ անխղճութեամբ, անգթութեամբ եւ անխնայ գիւղացիները կողոպտելով. . .

Պէտք է գիտնալ միանգամայն որ սորա մարդահամարի եւ կաշառածատրոց վարչութեանց մէջ պաշտօն ունենալով՝ այդ քողի տակն է որ ուղղակի ամէն տեսակ զեղծութիւն կը գործեն սանձաւճակ եւ կառավարութեանէն թեւադրեալ. . .

Այսպէս թուէս երեք տարի առաջ Ռաշիտի լիւրջ մանչը, երբ Սեւան գիւղ գացած ու անունով միայն տպաւորկներ ժողված էր գիւղացիներէն. յայնժամ՝ բռնի կերպով լիւր գիւղէն հոյի մը կին բերել տալով իւր չար կամքը կը կատարէ, եւ այսպիսով ձեռքը ունեցած կանխիկ դրամները կը վստէ. քաղաք վերադարձին, երբ կը մտածէ որ հայրը՝ Ռաշիտ դրամներու մասին իրմէ հաշիւ պիտի պահանջէ, հետեւեալ տարին դանձելու պայմանաւ նոյն ստակը գիւղացւոց տալը կը յայտնէ եւ այս առմամբ հայրը համարելու համար, ապառիկի տօմարին մէջ կարձանագրէ կարգ մը հայերու անուններ, որոնք երբեք սեղեկութիւն չունեն: Հետեւեալ տարին հայրը ամենայն հանգստութեամբ բռնի նշյն տպաւորկներով ը հաւաքէ:

Սորա գիւղացւոց առանց մի ստակ տալու գիւղի կէս արտերը իւրացուցած են եւ այն ալ՝ ամենալնարի հողերը, ամէն մի արաին մի չափ ցորեան տալով՝ կամ՝ ու մանց սպառնալիք կարգաւով ումանց ծեծելով, եւ ումանց յանդիւրաւի բանաւարկելով: Ամէն տարի Սեւան գիւղէն կը բերեն 60—70 քիլէ ցորեան (վանի քիլէն 8 չափ է եւ մի չափը 50 օխա է հին կշիւ) ամբողջ երկրագործական աշխատութիւն գիւղացւոց կողմանէ ցանլ, բազել, ծիւթի եւ մինչ առն բերել սարսափելի գժուարութեան փոխարէն սերմ միայն կուտան. . . Նոյնպէս Սեւան գիւղացի Զաքոնեան Ներսէսի (նախապէս իր հովիւ) 94 թւի ամսան՝ յիշեալի տան կահ կարասիքը մինչ օրտպահիկ հաց, խլ, պանիր եւ այլն բռնի յախշտակեց եւ Յակոբին ալ 24 ժամ սեան կապելով եւ մէջքի վրան ջուր լեցնելով անխնայ ծեծեց: Գիւղի արտերու վերաբերեալ ամբողջ ջուրի երեք չորրորդ մասը իւրացուցած է. գիւղացւոց արտեր ծարաւ մնալով կը թառմին եւ անպըտուղ կը մնան: Ղաստակի (թէմէթթու) տուրք գրեւ չը տալու պայմանաւ գիւղացիներէն կաշառք կուռնէ միեւնոյն ժամանակ զրիւ ալ կուտայ, այսպէս խեղճ գիւղացիներու տեսակ տուրք կը վճարէ. . . Սեւան գիւղը իրեն համար կաթնատու կով եղած է. Հաճի Ղաշլաղ գիւղի իւր ընկեր բիրբերուն կը սորվեցնէ որ Սեւան գիւ-

դի ոչխարները թալանեն. իւր ոչխարներն ալ ի միասին: Քիւրդերը կը յաջողին. վերջէն իւր ոչխարները բերելէն ի դատ՝ մնացեալ գիւղացւոց ոչխարները բերդերու հետ կը բաժնեն շատն ինք առնելով: Ամեն տարի իբրեւ մարդահամարի եւ կալուածատրոց պաշտօնեայ գիւղերը կը պատին ժողովելու թէ ուղղակի եւ թէ անուղղակի նոյնպէս եւ վաստակի տուրք (թէմէթթու) գրեւորու. ի միջի այլոց կերթան Մանտան գիւղը, եւ ամեն տունէն իրր կաշառք մէկ մէճիտ կ'առնեն: Ամեն տարի 50 ոչխար կը խրկէ յիշեալը ձրի պահելու գիւղացոց Տաս-Քսան գիւղի հետ յարաբերութիւն ունի. եւ նոյն գիւղերու ամբողջն ալ անանկացած եւ իսպառ փճացած վիճակի մէջ կը գտնուին: Գիւղեր բոլորովին լմնցան. իրենց ամբողջ քրտիկքի արդիւնքը տուին յիշեալ կեղեքիչ ու հարստահարիչ Ռաշիտ եւ Ապաիւլսահման առաջից, որով եւ ստանք 10—15000 լիւրայ կլորիկ գումար մը ունեցան:

Նոյնպէս յիշեալք 94 յոյ 20 Տիւրշան գիւղ գաւով (2 ժամ՝ հեռի բաղադէն) բռնի հայոց այգիներէն 30 բարդիի ծառ կտրել տուին. գիւղացիք ձրի տալէն ղկնի իրենց սոյլերով ալ Սեւան պիտի տանին... Կառավարութեան պաշտօնեայ եւ երեսելի քաղաքաբնակ թիւրքն է այս զեղծումները գործողը. երեսակայեցէք թէ միւսներ ինչ կընեն, սա ամենէն խիղճ ունեցողն է...

Թուէս 12 օր առաջ քիւրդեր հայոց ձորի մէջ գրտնուած խոտի գիւղի մօտեր Աստուածածին վանքը մտնելով կը պղծեն. երբ այս մասին տեղւոյս գեր. Առաջնորդի կողմէ հարցապնդուի՝ կը լինի կուսակալին, այս վերջինս կը պատասխանէ թէ Աղթամարայ կաթողիկոսը թող գրէ ինձ, քա. խօսքդ չեմ լսի. անօգնական առաջնորդը կտրիպուի լռել. կաթողիկոսը պիտի գրէ արդեօք (°°)...

Ախոռիկ գիւղի գիւղապետ քիւրդ Հիւսէյին աղան նոյն գիւղի մի հայի մարագէն բռնի ամբողջ անասնոցէն կը տանի, առաքելով թէ, յես այժմ՝ իշխանութիւն ունիմ՝ եւ կառավարութիւնէն հրաման ստացած եմ այն պատճառաւ կը տանիմ. երբ դու ալ իշխանութիւն կուեննաս այն ժամանակ դու ալ տար...

Թուէս ութ օր առաջ Այգեւստան քենտիրձիի վրայ հսկող երրորդ գոմիսէր կրկին Այգեւստան գտնուած պողպատէ դարի սրճարանն երթալով՝ սրճարանի մէջ կտնուած Անգ. թաղուհու պատկերն վեր ի վայր կը ձեղքէ անբարեյական խօսքեր ու հայհոյանքներ արձակելով նորո՛ւ: Երրորդ գոմիսէր Մուսթաֆայ էֆենտին քանի մը օրէ ի վեր անյայտ է. կը լսուի կուսակալի տունն է: Երգեօք Անգ. հիւպատոսը ինչ միջոցներ ձեռք պիտի առնէ...

Թուէս 13 օր առաջ Բաղկէտուուէյի Սարդի Բլուզի մանչ քիւրդ Սէիտ Խաթէի Մղղին խրեանց վեց արբանեակներով Հայոց Չորի մէջ գտնուած Կղզի անուն գիւղ գալով վերջին աստիճան գիւղացոց կը չարչարեն. ծեծել, սեան կապել հայհոյել եւ վերջապէս ամեն տունէ մի ոչխար առնելով կը Վիսեանան: Գիւղի ուշիտը քաղաք կը գտնուէր, եւ երբ այս լուրը իմանալով կուսակալին գիմեց, 3 ժամ բանտարկուեցաւ բողբոջելուն համար եւ ոստիկանով շուտով իր խոսվարար գիւղ խրկեցին. կատակերգութիւնը վերջացաւ...

Վաջրերունիք գաւառի մէջ գտնուած Չերաբլու գիւղէն 29 տուն գաղթեցին, բսելով յերթանք ուր կը լինի թող լինի, գոնէ այս անիծեալ համառեւեկներէն ազատուինք: Տեղս գտնուած գիւղեր գրեթէ աւերակ եւ անմարդաբնակ են դարձեր: Գեւմարայ կողմի գիւղերն ալ նոյնպէս կը տառապին: Անցեալներ քանիկ իւրի մէջ հա-

մառեւներ մեծ չարիք գործեցին:

1895 Ապրիլ 23 Ան

Կրօնափոխութեանց արդէն թիւ եւ համար չի կայ տասնեակներով միասին կը թրքանան. այս ամենը կը լինի կառավարութեան յայտնի թեկադրութեամբ, կրօնափոխ օրիորդ կամ կին ղեռ չի կրօնափոխուած, կուսակալը բռնութեամբ լիւր թուրքերու տուն կը խրկէ: Երեսակայեցէք, ինչ կը լինի նոցա վիճակը. անշուշտ կաշառելով համոզելով եւ սպառնալիք կարգալով խտրէի ժողովի ներկայութեան կը բերեն իրր կատակերգութիւն. չեն թողուր օր գեր. Առաջնորդը առնանձին կրօնափոխին հետ մինչեւ իսկ տեսնուի. այս մասին Առաջնորդի ընդգիմութիւններ ի զուր կերթան: Աւելի ցաւալին այն է որ կրօնափոխ առն թէ կնոջ 5-10-12 եւ մինչ իսկ աւելի տարու աղայք կառավարութիւնը, կը պահանջէ որ Շէրիի (°°) օրէնքի համաձայն իրենց մօր ու հօր հետ պէտք է թրքանան, եւ այս բանս արդէն քանիցս գործադրել տուին: Կրկին այս մասին Առաջնորդի կողմէն եղած ընդգիմութիւնը կուսակալի կողմէն բողբոջվին անլսելի կը մնան. եւ շատ անգամ՝ կուսակալը բարկանալով Առաջնորդին վրայ խոսվարար եւ այլն անուններ կուտայ. ինչ ընէ Առաջնորդը գաղանի մը զիմաց միս մինակ կը գտնուի. Առաջնորդը նորէն իր պարտականութիւնները անթերի կը կատարէ: Բայց ուր են մեր մեծ իշխանք, ոմանք միւֆթի Պօղոսի հետ գաւազրութեան մէջ են. (կամ՝ ղեկավարի մասին հանրագիր կը չլինեն կամ՝ բանտի մէջ բնական մահուամբ չի մեռածներուն համար բնական մահուամբ մեռնելը կը հաստատեն. կամ՝ Առաջնորդ Սահակ վարդապետին խորխորատ իջեցնելու կաշխատին, որպէսզի միւֆթի Պօղոս անոր փոխարէն Առաջնորդ ընտրուի): Պօղոսի մարդիկ անգութ, վախառու, կառավարութեան ընկեր, աւազակ եւ լիւր մարդիկներ են ամենքն ալ... իրենք զիրենք լաւ կը ճանչնան... ամօթ իրենց երեսին ու պատիւին, որ ժողովրդեան հազար խոցերով վիրաւորուած սիրան՝ իրանք եւս իրանց ազգակործան ընթացքով աւելի եւս կը վիրաւորեն... Պօղոս արդէն ոչ թէ միայն միւֆթի է, այլ գիտես թէ, Ատլիէի բնիչ է, մի օտքը կուսակալի բոլի է, միւսը ընդհ. գառախաղին. Պօղոսի տունն արդէն Միւսթանթիգ խանէ դարձած է, կերեւի թէ Պօղոս բուն չունի երեք միւսեւ տապալէ տեղիս առաջնորդը...

ՀԱՍԻԻ

Եւոյ տեսաւ. «ԳԵՂԱՓԱՐ» N° 2 հետեւեալ բովանդակութեամբ:

Կոմմունեական Կուս. Մանիֆէստը, Կ. Մարքս և Գր. Էնգէլս. — Կոմմունիզմը եւ Տնտես. Էվոլյուցիան, Պօլ Լաֆարգ. — * * * I. II (բանաստեղծ.), Լիւսեյ. — Միւր. Դաւ. բանդեանցի կենսագրութիւնը եւ նամակները. — Նամակ խմբագրութեան, Պեոար Է. Լաֆարգ. — Մարտու (բանաստեղծ.), Լիւսեյ. — Ռաֆայէլ Պատկանեան, Ա. Էն. — Եանց. — Մամուլի տեսութիւն, Ա. Էն. — Եանց. — Խմբագրութեան կողմից. — Սոցիալիզմը Եւրոպայում. Սոց. Ռուս. նիւտու, Է. Մ. — Ոսկերդին (վէպ Ատ — Տ. Ի.):

Հօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և զրամ՝ ու մանկատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush London, W. [Angleterre]